



Կարգապահական գործ ԿԳ-14068

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հունվարի 21-ի թիվ 12-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ ԿԳ/10-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՄՇԵՐ ԲԱՂԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅՈՒ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**)
խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**),

նախագահությամբ Խորհրդի անդամ Կարեն Մարդարյանի,
մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Նելլի
Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեծլումյանի,
Լուսինե Սահակյանի, Մարտուն Փանոսյանի, Տիգրան Խուրշուբյանի,
քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,

21.01.2015թ.-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Միեր Բաղայանին
(փաստաբանական գործունեության արտոնագիր № 1005) (այսուհետ նաև՝ **Պատասխանող**),
կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

19.05.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատում ստացվել է Կապան քաղաքի բնակիչ
Վիկտոր Պավլուշայի Մարտիրոսյանի դիմումը փաստաբան Միեր Բաղայանին
պատասխանատվության ենթարկելու մասին՝ հանձնարարությունն ընդունելը բացառող
հանգամանքների առկայության պարագայում վստահորդի շահերը ներկայացնելու համար
(շահերի հակասություն):

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.

2014 թվականի հունիսի 19-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան
Միեր Բաղայանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու
մասին» 195-Ա/ԿԳ-14068 որոշումը, համաձայն որի որոշվել է.

1. Փաստաբան Մհեր Բաղայանի (արտոնագիր թիվ 1005) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 և 3.2.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-14068):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել քաղաքացի Վիկտոր Մարտիրոսյանին:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին:

- սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին և փաստաբան Մհեր Բաղայանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները

Դիմող՝ Վիկտոր Մարտիրոսյանն իր կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված 19.05.2014թ. ուղղված դիմումով հայտնել է, որ իր մայրը մահացել է 08.02.2013թ. և մորից հետո ժառանգությունն ընդունելու հետ կապված հարցերով իրեն իրավաբանական ծառայություններ է մատուցել փաստաբան Մհեր Բաղայանը, որի խորհրդով ինքը նոտարական գրասենյակ դիմելու և ժառանգությունը ձևակերպելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթեր է հավաքել: Իր խնդրանքով Մհեր Բաղայանը հարցում է կատարել Կապան քաղաքի ՔԿԱԳ տարածքային բաժին իր հանգուցյալ մոր ծննդյան ակտի պատճեն ստանալու համար: Հետագայում դիմողի և նրա քրոջ ու հոր միջև ժառանգական գույքի հետ կապված վեճ է առաջացել և Ռուզաննա Մարտիրոսյանը /դիմողի քույրը/ և Պավլուշա Մարտիրոսյանը /դիմողի հայրը/ ընդդեմ իրեն ներկայացրել են հայցադիմում՝ ըստ օրենքի ժառանգների միջև ժառանգությունը բաժանելու պահանջով /քաղ.գործ թիվ ՄԴ/0152/02/14: Նշված գործով որպես հայցվորի ներկայացուցիչ հանդես է եկել փաստաբան Մհեր Բաղայանը:

Գտնում է, որ փաստաբան Մհեր Բաղայանի կողմից թույլ է տրվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջի խախտում: Ճիշտ է իր և փաստաբան Մհեր Բաղայանի միջև ծառայության մատուցման պայմանագիր չի կնքվել, սակայն վերջինս իրեն տվել է խորհրդատվություն, ցուցաբերել է իրավաբանական օգնություն և նա չէր կարող ներկայացնել այլ անձանց շահերը իր դեմ՝ օգտագործելով ժամանակին իր համար ձեռք բերված տվյալները:

17.11.2014թ. Դիմողի կողմից ներկայացվել են առարկություններ ընդդեմ կարգապահական գործով նախապատրաստողի եզրակացությանը: Առարկություններով Դիմողը ևս մեկ անգամ հաստատել է դիմումում արտահայտած իր դիրքորոշումն այն մասին,

որ փաստաբան Մհեր Բաղայանը թույլ է տվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջի խախտում:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություններ չի տվել, թեև ծանուցվել է իր դիմումի հիման վրա վարույթի հարուցման և իր իրավունքների մասին:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստերին Դիմողը չի ներկայացել, թեև նիստի վայրի և ժամանանակի մասին պատշաճ ծանուցվել է:

Պատասխանող Մհեր Բաղայանը բացատրություն է տվել այն մասին, որ «2014թ. հունիսի 30-ին փոստային ծառայության միջոցով ստացա ծանուցումը` ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի թիվ 195-Ա/ԿԳ-14068 որոշման վերաբերյալ և կից որոշումը:

Սույն որոշմամբ հասկացա, որ ՀՀ քաղաքացի Վիկտոր Մարտիրոսյանը դիմել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և հայտնել, 08.02.2013թ. իր մոր մահից հետո ժառանգությունն ընդունելու հետ կապված, իբրև ես, որպես փաստաբանական իրավաբանական ծառայություններ եմ մատուցել նրան և իմ խորհրդով նա դիմել է նոտարական գրասենյակ և ժառանգությունը ձևակերպելու նպատակով նրա համար անհրաժեշտ փաստաթղթեր են հավաքել, իսկ իրավական օգնություն ցույց տալու շրջանակներում ես, որպես փաստաբան, հարցում եմ կատարել Կապան քաղաքի ՔԿԱԳ տարածքային բաժին, նրա մոր ծննդյան վկայականի պատճենը ստանալու համար:

Ես` Մհեր Բաղայանս, որպես փաստաբան, որևէ անգամ, որևէ տեղ կամ իմ գրասենյակում ՀՀ քաղաքացի Վիկտոր Մարտիրոսյանին իրավական օգնություն չեմ տրամադրել, ավելին Վիկտոր Մարտիրոսյանն ինձ նոտարական վավերացման կամ հասարակ գրավոր ձևով լիազորագիր չի տվել ժառանգության վերաբերյալ իրավական օգնություն կամ ծառայություն մատուցելու համար, Վիկտոր Մարտիրոսյանի և իմ միջև փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր չի կնքվել, այսինքն` Վիկտոր Մարտիրոսյանը շինծու և իրականությանը չհամապատասխանող դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին:

Ինչ վերաբերում է Վիկտոր Մարտիրոսյանի կողմից ներկայացված դիմումի մեջ նշված թիվ Ե-13/99 գրության պատասխան հանդիսացող իր մոր` Հասմիկ Բաղայանի ծննդյան գրանցման ակտին, որը Կապան ՔԿԱԳ բաժնի կողմից տրվել է, որպես իմ գրության պատասխան, այն իրականությանը չի համապատասխանում, այսինքն, 2013թ. հունիսի 21-ին ես իմ թիվ Ե-13/99 գրությամբ դիմել եմ Կապան ՔԿԱԳ բաժին, սակայն իմ վստահորդ Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյանների խնդրանքով, որպեսզի իր մոր և վերջինիս կնոջ` Հասմիկ Բաղայանի ծննդյան գրանցման ակտի պատճենը, վավերացված ստանալու և իրավասու մարմնից ստացել եմ Հասմիկ Բաղայանի ծննդյան գրանցման ակտի պատճենը և հանձնել Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյաններին իր աղջկա և վերջինիս թոռնիկի` Մելինե Սարգսյանի միջոցով, որպեսզի հետագայում ըստ օրենքի ժառանգություն ընդունեն:

Հայտնեմ, որ Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյանների մայրը և վերջինիս կինը՝ Հասմիկ Բադալյանն իմ ազգակից բարեկամն է, այսինքն իմ վստահորդները հանդիսանում են իմ բարեկամները, որի պատճառով էլ փորձել եմ օգնել նրանց, իսկ հետագայում նրանց և Վիկտոր Մարտիրոսյանի միջև վեճ է առաջացել ժառանգության ընդունման հետ կապված:

Վիկտոր Մարտիրոսյանը Պավլուշա Մարտիրոսյանի և Հասմիկ Բադալյանի հարազատ որդին է, իսկ Ռուզաննա Մարտիրոսյանի հարազատ եղբայրը:

Իրականությունն այն է, որ Վիկտոր Մարտիրոսյանը փորձել է իր մոր ժառանգությունը միայնակ ընդունել և իր անկողնային հիվանդ, կույր հորից՝ Պավլուշա Մարտիրոսյանից և քրոջից՝ Ռուզաննա Մարտիրոսյանից պահանջել է, որպեսզի հրաժարվեն ըստ օրենքի ժառանգությունից, որից հետո հայրը՝ Պավլուշա Մարտիրոսյանը, չի ցանկացել իր կնոջ ժառանգությունից հրաժարվել, իսկ Վիկտոր Մարտիրոսյանը 2013թ. օգոստոս ամսին, իր հորը թողնելով Գեղենուշ համայնքում գտնվող թիվ 48 տանը անօգնական վիճակում, հեռացել է իր ընտանիքով և մինչև այժմ բնակվում է Կապան քաղաքի Շահումյանի 31/33 հասցեի բնակարանում, իսկ նրանից հետո հարևանները զանգահարել են իմ վստահորդ Ռուզաննա Մարտիրոսյանին, որն անմիջապես վերադարձել է ՌԴ-ից, իր հորը խնամելու նպատակով, որը մինչև այժմ բնակվում է իր հոր հետ և խնամում է կույր և անկողնային հիվանդ հորը:

Վիկտոր Մարտիրոսյանն իր ընտանիքով իր հոր՝ Գեղենուշ համայնքում գտնվող թիվ 48 տանը, մոր մահից հետո բնակվելու ժամանակահատվածում, հոր տանից ոչ միայն իմ վստահորդների՝ Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյանների խնդրանքով, իմ կողմից Կապանի ՔԿԱԳ բաժնից ձեռք բերված Հասմիկ Բադալյանի ծննդյան գրանցման ակտի պատճենն է օգտագործել ժառանգության ընդունման վերաբերյալ նոտարական վավերացմամբ հայտարարություն տալու համար, այլև իմ վստահորդի ծննդյան վկայականը, իմ վստահորդի ծնողների ամուսնության վկայականը և Հասմիկ Բադալյանի անունով կադաստրի կողմից գրանցված և տրված 9 հատ սեփականության իրավունքի վկայականները, սակայն հետագայում ցանկանում էր միայնակ ընդունել իր մոր ժառանգությունը, որին դեմ էին իմ վստահորդը՝ իր հայրը:

Ռուզաննա Պավլուշայի Մարտիրոսյանը ինձ, որպես փաստաբան դիմել է իր մոր՝ Հասմիկ Բադալյանի, մահից՝ 08.02.2013թ., հետո մեկ ամսվա ընթացքում և մինչև այժմ ըստ օրենքի ժառանգության ընդունման վերաբերյալ, իսկ ես նրան իրավական խորհրդատվություն եմ տվել, որից հետո նրա աղջկա միջոցով և հեռախոսազանգով պատասխանել եմ նրա բոլոր հարցերին, որը վերաբերում է ժառանգության ընդունմանը, իսկ ՌԴ-ից վերադառնալուց հետո մի քանի անգամ այցելել է իմ գրասենյակ, որից հետո անհրաժեշտություն առաջացավ հայց ներկայացնելու դատարան իմ վստահորդներ՝ Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյանների կողմից ընդդեմ Վիկտոր Մարտիրոսյանի: Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյանները հասարակ գրավոր ձևով լիազորագիր են տվել ինձ, որպեսզի նրանց անունից հանդես գամ դատարանում և այլ իրավասու մարմիններում, կապված ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգությունը բաժանելու հետ:

Վերը նշված հանգամանքները հիմնավորվում է իմ վստահորդ՝ Ռուզաննա Մարտիրոսյանի բացատրագրով և կից փաստաթղթերով, որի արդյունքում պարզ է դառնում,

որ Վիկտոր Մարտիրոսյանի դիմումի բովանդակությունը և պահանջը անհիմն և շինծու է և այդ դիմումով նա փորձում է վիրավորել իմ՝ շրջապատում ունեցած մասնագիտական արժանապատվությունը և հարգանքը»:

Բացատրությանը կից Պատասխանողը ներկայացրել է Ռուզաննա Մարտիրոսյանի բացատրագիրը, նրա հետ կնքված փաստաբանական ծառայության մատուցման պայմանագրի, վերջինիս կողմից տրված լիազորագրի և իր կողմից Կապանի ՔԿԱԳ հասցեագրված գրության պատճենները:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստերին Պատասխանողը չի ներկայացել, թեև նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցվել է:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Արմեն Սիմոնյանին: Վերջինս հավաքագրել է տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրել գործում առկա ապացույցները, որի արդյունքներով 2014 թվականի օգոստոսի 26-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, գտնում եմ,

Որ չի հաստատվել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 19.06.2014թ. թիվ 195-Ա/ԿԳ-14068 որոշման հիման վրա փաստաբան Մհեր Բադալյանի նկատմամբ Փաստաբանի վարքագիծ կանոնադրքի 3.2.2 և 3.2.5 ենթակետերի պահանջների խախտման փաստը»:

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի Խորհուրդը արձանագրում է հետևյալ փաստերը.

1. Դիմողի և Պատասխանողի միջև բացակայում են պայմանագրային հարաբերություններ:

2. Փաստաբան Մհեր Բադալյանի կողմից Կապանի ՔԿԱԳ բաժին հասցեագրված գրության մեջ չի նշվում, թե ով է հանդիսանում իր վստահորդը:

3. Փաստաբան Մհեր Բադալյանի և Ռուզաննա Մարտիրոսյանի միջև առկա է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր և պատշաճ լիազորագիր:

Վերը շարադրվածը հիմնավորված համարելու համար ուսումնասիրվել են.

1. Դիմողի 19.05.2014թ. դիմումը:
2. Հասմիկ Բադալյանի ծննդյան ակտի գրանցման պատճեն:

3. Փաստաբան Մ. Բաղայանի 25.07.2014թ. բացատրությունը:

4. Փաստաբան Մհեր Բաղայանի կողմից Կապանի ՔԿԱԳ բաժին հասցեագրված գրության պատճեն:

5. Մհեր Բաղայանի և Ռուզաննա Մարտիրոսյանի միջև 30.09.2013թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճեն:

6. 30.09.2013թ. լիազորագրի պատճեն:

7. Ռուզաննա Մարտիրոսյանի 25.07.2014թ. բացատրագիրը:

8. Դիմողի 17.11.2014թ. առարկությունները:

7. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանող Մհեր Բաղայանը փաստաբանի արտոնագիր է ստացել 16.10.2010թ.-ին, նրա նկատմամբ 2010-2014թթ. ժամանակահատվածում հարուցվել է երկու կարգապահական վարույթ, որոնք կարճվել են:

Բացի այդ, 05.09.2014թ. քաղաքացու բողոքի հիման վրա Մհեր Բաղայանի նկատմամբ Պալատի նախագահի թիվ 318-Ս/ԿԳ-14113 որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, սակայն այդ վարույթով նիստը դեռ չի նշանակվել:

8. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ Մհեր Բաղայանի նկատմամբ 19.06.2014թ. հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնադրքի 3.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա:

Նույն կանոնադրքի 3.2.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև:

Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Փաստորեն, սույն վարույթով ապացուցման ենթակա է այն փաստը, որ մինչև Մհեր Բաղայանի կողմից Ռուզաննա և Պավլուշա Մարտիրոսյանից հանձնարարություն ընդունելը, նա արդեն իսկ նույն գործի հետ կապված հանձնարարություն է ընդունել դիմող Վիկտոր Մարտիրոսյանից:

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Փաստորեն, ապացուցման ենթակա վերը նշված փաստի ապացուցման պարտականությունը կրում է այն վկայակոչած կողմը՝ դիմող Վիկտոր Մարտիրոսյանը:

Մինչդեռ, վերջինիս կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհաստատվեր փաստաբան Մհեր Բադալյանի կողմից նրան փաստանական ծառայություններ մատուցելու փաստը:

Կարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական վարույթն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կողմերի մրցակցության և իրավահավասարության պայմաններում դիմող Վ. Մարտիրոսյանը չի ապացուցել դիմում բողոքում նշված փաստերի առկայությունը:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-ից 39.8-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Մհեր Բադալյանի (արտոնագիր՝ 1005) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի կարգապահական գործերը համակարգողին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և Պատասխանողին:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան